ՀՏԴ 37.02

Շարադրությունների և փոխադրությունների կազմակերպումն ու անցկացումը ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ

Անուշ Եդոյան
Նարինե Ադամյան

Հանգուցային բառեր. *կապակցված խոսքի զարգացում, ստեղծագործական և վերլուծական շարադրություններ, «Շարադրության շեղանկյուն», «Գրական խմբակ» մեթոդական հնարներ, «Կերպարի վերլուծության» թերթիկ, պատմողական, նկարագրական և դատողական փոխադրություններ, «Հատվածակողմ», «Երամաս օրագիր»*

Նախաբան

Բոլորս միշտ հպարտացել և հպարտանում ենք մեր հնամենի լեզվի ճոխությամբ ու գեղեցկությամբ, բայց և դժգոհում ենք մեր աշակերտների մեծամասնության խոսքի անփույթ, անհարդար կամ լեզվի ծայրաստիճան աղքատ լինելուց: Պատճառը, Սևակի բառերով, «հայերենի բառամթերքից կեսբուռ օգտվելու կամավոր մուրացիկությունն է»:

«Յուրաքանչյուր գրագետ անձնավորություն, ցանկացած մասնագիտության տեր, անկախ կրթության աստիճանից ու գիտելիքների չափից, պետք է կարողանա պարզ, անսխալ հայերենով գրավոր (նաև բանավոր) շարադրել իր ասելիքը: Գրագետ, ճիշտ ձևակերպված գրավոր խոսքը մարդու գիտելիքների, մտավոր զարգացման, բարեկրթության վկայությունն է» [2]:

Այս ամենի գլխավոր պատասխանատուն ուսուցիչն է, իսկ ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր պայմանը նրա մեթոդական գրագիտության աճն է:

Մերօրյա դպրոցում էական շատ փոփոխություններ են կատարվել: Վերջերս փորձարկվող կրթական նոր չափորոշիչներով փոփոխվել են միջնակարգ դպրոցում հայոց լեզվի և գրականության դասավանդման հայեցակարգը, ուսումնական ընդհանուր նպատակները, առարկաների բովանդակային ընդգրկումը, ծրագրերն ու ժամաքանակը:

Նոր ձև ու բովանդակություն են ստացել սովորողին ներկայացվող պահանջները, աշակերտների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների պահանջվող ծավալը՝ արժեքային համակարգը համապատասխանեցնելով նոր կյանքի հրամայականի պահանջներով կատարված

փոփոխություններին՝ ծրագրերին ու համեմատաբար սուղ ժամաքանակին այնպես, որ սովորողները հասցնեն գրավորն ավարտել նույնիսկ մեկ դասաժամի ընթացքում: Սրանք շարադրություններ, փոխադրություններ, զեկուցումներ, համառատոգրման և այլ ստեղծագործական աշխատանքներ ենթադրող տարաբնույթ առաջադրանքներ ու հանձնարարականներ են, որոնց վերջնական նպատակը սովորողի կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակումն է [6, 7]: Այս աշխատանքների շարքում կարևորում ենք փոխադրությունների՝ որպես լեզվի լավագույն օրինակների հետ շփման վարժությունների դերը: Բնագիրը, որն առաջարկվում է երեխային (գրավոր) վերապատմելու համար, մի յուրահատուկ օգնություն է, որը ցույց է տալիս ուսուցիչը աշակերտի համար բավականին բարդ՝ պատմելու և այդ նյութը գրի առնելու գործընթացում [3, 107]:

Փոխադրությանը և շարադրությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

Ուսուցիչը պետք է լուրջ հետևողականությամբ նախագծի դասը, ուսուցման գործընթացում կիրառվող նոր եղանակներն ու մեթոդները պետք է այնպես տեղայնացնի գրավորի դասերին, որ կարողանա բավարարել ոչ միայն ժամանակի և արդի դպրոցի պահանջները, այլև սովորողների բազմապիսի հետաքրքրությունները:

Ցավոք, դասալսումների ժամանակ հաճախ ենք փաստում, որ ուսուցիչները գրավորի այս տեսակների անցկացման ժամանակ կիրառում են զուտ ավանդական մեթոդներ, չեն ձգտում դրանք թարմացնել, նոր մեթոդներ չեն կիրառում կամ երբեմն էլ կիրառում են ինքնանպատակ: Ժամանակները արագ են փոփոխվում, կյանքն իր պահանջներն է պարտադրում, և նոր չափորոշիչներով սովորողներին առաջադրվող վերջնարդյունքների ապահովման պահանջերից ելնելով՝ պետք է փաստել, որ քարացած մոտեցումներին կառչած մնալն անընդունելի է, և մշտապես անհրաժեշտ է զբաղվել նորի արմատավորման կարևոր խնդրով, կարողանալ օգտվել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրումից:

Գրավոր աշխատանքի այս տեսակները սովորողի կապակցված գրավոր խոսքի զարգացման լավագույն միջոցներից են, դրանք միտված են առաջին հերթին սովորողի լեզվընկալման և կապակցված խոսք կազմելու կարողությունների ձևավորմանը, սովորածը կիրառելու ու արժևորելու նպատակադրմանը: Մտքերը գրավոր շարադրելը դժվար գործ է, և սրան աշակերտին պիտի վարժեցնել դեռ ցածր դասարաններից:

Գրավոր խոսքի մշակման և հղկման գործընթացում ուսուցիչը պիտի կիրառի ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից, համագործակցային մեթոդներ և հնարներ, որոնք կապահովեն ցանկալի արդյունք՝ սովորողի գրագետ, հստակ և դիպուկ, իրադրությանը, հաղորդակցական բնույթին համապատասխան գրավոր խոսք:

Բացի փոխադրություն և շարադրություն գրելու մեթոդներ մշակելուց՝ ուսուցիչը թեմաների ընտրության հարցում ևս կարևոր անելիք ունի: Ավագ դպրոցում գրավորների համար նախատեսված բնագրերից նպատակահարմար է ընտրել այնպիսիք, որոնցում ավելի վառ են ներկայացված մեր ազգային հոգեբանությունը, մեր քերթության անմահ մշակների վարքը, որոնք ձևավորում են մեզ և օտարներին ճանաչելու, համաշխարհային ու մեր ազգային ստեղծածը արժևորելու ունակություն: Հանրակրթական դպրոցի 4-10-րդ դասարանների համար նախատեսված փոխադրության նյութերի ժողովածուն [5] հարուստ աղբյուր է բառի նրբիմաստների գործածության, պատկերավոր ու փոխաբերական արտահայտությունների ուսուցման ու գործնական կիրառության համար, հարուստ դաշտ՝ քերականական գիտելիքների ստուգման, ամրապնդման համար:

Շարադրությունների թեման նույնպես պետք է նպատակային ընտրվի, այսինքն՝ պետք է նախապատվությունը տալ արդիական գաղափարներ ընդգրկող, իրականության հետ աղերսներ ունեցող, դաստիարակչական հրատապ խնդիրներ լուծող թեմաներին:

Շարադրությունը գրավոր խոսքի այն տեսակն է, որը լայն հնարավորություն է տալիս գրողին մտքերն ազատ արտահայտելուհուզական, արտահայտչական բազմազան ձևերով խոսքն ընկալելի դարձնելու: Գրագետ, համոզիչ, տպավորիչ խոսք ունենալու համար անհրաժեշտ է ունենալ հարուստ բառապաշար, իմանալ տվյալ լեզվի քերականությունը, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին և օժտված լինել ստեղծագործելու գոնե նվազագույն ձիրքով,: Հանրակրթական դպրոցի հայոց լեզվի առարկայական չափորոշչով սահմանված պահանջներից են ինքնուրույն գրավոր խոսք կառուցելու, շարադրությունների, փոխադրությունների և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակումը, խոսքի մշակույթի ձևավորումը և այլն [6, 8]:

Առարկայական ծրագրով ավագ դպրոցի 12-րդ դասարանի առաջին կիսամյակի սկզբում նախատեսված է շարադրությունների միջոցով իրականացնել սովորողների կապակցված խոսքի ուսուցման աշխատանքներ:

Շարադրության տեսակները

Ինչպես հայտնի է, շարադրությունը լինում է երկու տեսակ՝ *ստեղծագործական* կամ *ազատ* և *վերլուծական*: Ստեղծագործական կամ ազատ շարադրությունները նպատակ ունեն զարգացնելու աշակերտների մտածողական, խոհական, ստեղծագործական կարողությունները, սրելու երևակայությունը, հարստացնելու բառապաշարը և այլն:

Փորձը ցույց է տվել, որ *ստեղծագործական շարադրություն* գրելը դյուրին է այն սովորողների համար, ովքեր կարդացել են ոչ միայն ծրագրային, այլև հանձնարարված լրացուցիչ գեղարվեստական երկերը: Նրանք այդ ստեղծագործություններից կարող են հիշել դիպուկ արտահայտություններ, դարձվածքներ, ոճական հետաքրքիր կառույցներ, հանձնարարված թեմաներին համապատասխան պատմություններ, որոնք կօգնեն մտքերի գեղեցիկ շարադրմանը [2]:

Ուսուցողական շարադրությունների համար մեթոդական հնարները բազմազան են, դրանց նպատակային կիրառությունը արդյունք է տալիս այն դեպքում, երբ սովորողները միջին դասարաններից վարժված են լինում ինքնուրույն գրելուն: Դրան կարելի է հասնել՝ տարբեր հանձնարարականներ կամ առաջադրանքներ տալով, ասենք՝ գրել շարադրանքներ ըստ պլանի հարցերի, ըստ տրված բառերի և արտահայտությունների, ըստ գրական երկերից սովորած պատկերավոր արտահայտությունների, տպավորություն արշավից, լսած երաժշտությունից կամ դիտած ֆիլմից, տրված պատմության սկիզբ կամ ավարտ հորինել, տվյալ գրական երկի բեմադրության համար բեմագիր (սցենար) գրելու փորձեր անել, տեքստը երկխոսություններով հարստացնել, վերարտադրել խոհերը, բնութագրել մտերիմ, սիրելի մարդկանց կամ գրական հերոսին և այլն:

Վերլուծական շարադրության ուսուցման նպատակն է մի կողմից՝ գրականության պատմության մեջ գրողի զբաղեցրած տեղի, դերի, ստեղծագործության գաղափարական և գեղարվեստական արժանիքների մասին, դասի ընթացքում աշակերտի ձեռք բերած գիտելիքների ամրակայման, մյուս կողմից՝ գիտական երկեր վերլուծելու կարողությունների զարգացումը, սեփական դատողությունները գրական հայերենով անսխալ շարադրելու հմտության ձեռքբերումը [2]:

Աշակերտներին նախապես տեղեկացնում ենք, որ գրական որևէ թեմայով (գրողի որևէ գործի կամ մեկ կամ մի քանի կերպարների մասին) վերլուծական շարադրություն գրելիս վերլուծությունը պետք է կատարել փաստական նյութի հիման վրա՝ «տեղեկություն-վերլուծություն-արժևորում» ընթացքով [2]:

Երբեմն աշակերտները դժվարանում են վերլուծական շարադրություն գրել, հատկապես կերպար բնութագրել: Սակայն ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությունը տալիս է ցանկալի արդյունք: Բերենք ուսուցողական շարադրության դասի մեկ օրինակ:

Դասի թեման՝ գրավոր աշխատանք (վերլուծական-բնութագրական շարադրություն) Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի վերաբերյալ

Դասի նպատակը՝

- ակադեմիական՝ գիտելիքներ հայ ժողովրդի պատմական իրադարձությունների վերաբերյալ, բառապաշարի հարստացում
- հանրային՝ աշակերտների գրավոր կապակցված խոսքի, ստեղծագործական կարողությունների և երևակայության զարգացում, ինքնուրույնության զարգացում
- արժեհամակարգային՝ ազգային ինքնագիտակցության բարձրացում, իր ժողովրդի կյանքն ու ճակատագիրը ըմբռնելու կարողություն, երաժշտական ճաշակի ձևավորում
- վերաբերմունքային՝ հայոց լեզվի և հայ գրականության նկատմամբ գիտակցված, ազգային արժանապատվությամբ զուգորդված մոտեցում, հայրենիքի նկատմամբ անձնազոհ սիրո դրսևորում, ազգի և ժողովրդի հանդեպ պարտականություններում՝ բարեխիղճ և օրինապահ քաղաքացի դառնալու համոզմունք:

Դասի կահավորումը՝ նկարներ, պաստառներ՝ Եղիշեի թևավոր խոսքերով (հուշում է վերնագիրը՝ «Վարդան Մամիկոնյանի կերպարը»)

Մեթոդները՝ «Շարադրության շեղանկյուն», «Գրական խմբակ», «Կերպարի վերլուծություն» թերթիկ

Ներառվող առարկաներ՝ կարևորում ենք միջառարկայական և վերառարկայական միահյուսման անհրաժեշտությունը (գրականություն, երաժշտություն, նկարչություն)

Դասի ընթացքը՝ *Խթանման փուլում* հնչում է «Պլպուլն Ավարայրի» երաժշտությունը, որին հաջորդում է «Վարդանի երգը» (Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին դավով, հրապուրանքով տիրեց մեր երկրին…): Դասարանի լավագույն ասմունքողին հանձնարվում է կարդալ Վարդան Մամիկոնյանի՝ հայոց զորքին ուղղված խոսքը. «Շատ պատերազմներ եմ տեսել, և դուք էլ ինձ հետ…»:

Կերպարի բնութագրման համար ներկայացվում է պլան՝ «Շարադրության շեղանկյուն» մեթոդական հնարի կիրառմամբ [1]:



Նկար 1. «Շարադրության շեղանկյուն» մեթոդական հնար

Պլանի կետերը քննարկելուց հետո սովորողներին ծանոթացնում ենք գրավոր աշխատանքը գրելու ձևին՝ ստեղծագործաբար կիրառելով «Գրական խմբակ» մեթոդը: Ընտրում ենք դերակատարներ՝

- Լուսաբանող
- Լեզվագետ
- Հարցախույզ
- Ցուցադրող
- Ամփոփող

Բաշխում ենք առաջադրանքները: Լուսաբանողը բնագրից գտնում է հետաքրքիր հատվածներ, կատարում նկատառումներ: Հարցախույզը քննարկում է, կատարում պարզաբանում: Ցուցադրողը նկարներն է մեկնաբանում: Ամփոփողը արդիականացնում է վեպի գլխավոր իրադարձությունը, հերոսի պահվածքը և գործողությունները՝ կատարելով համեմատություններ:

Յուրաքանչյուրին տալիս ենք «Կերպարի վերլուծություն» թերթիկը [1]:

Աղյուսակ 1

Ե՞րբ ենք առաջին անգամ հանդիպում հերոսին	**Ինչպե՞ս են նրան վերաբերվում մյուս կերպարները**	**Ո՞րն է նրա քայլերի կարևորությունը և ինչո՞ւ**	**Արտահայտել սեփական վերաբերմունքը**

Իմաստի ընկալման փուլում առաջադրում ենք բաց հարցեր.

1. Ո՞վ է Վարդան Մամիկոնյանը:

2. Ինչո՞ւ պետք է հայերը քրիստոնեություն դավանեն:

3. Ինչպիսի՞ հաղթանակ տարան հայերը:

Աշխույժ քննարկումից նոր մտքեր և կարծիքներ են ծնվում, բացահայտումներ արվում, որոնցով ամբողջանում է զորավարի կերպարը՝ բոլոր կողմերով:

Կշռադատման փուլում առաջարկում ենք ունկնդրել «Շարական Սուրբ Վարդանանց»՝ աշակերտներին հաղորդակից դարձնելով դասական երաժշտությանը՝ արժևորելու ազգային ակունքներից եկող վեհն ու վեհագույնը: Աշակերտները համակարգում են լսածն ու սովորածը և գրավոր շարադրում կերպարի բնութագրումը՝ ամփոփելով սեփական եզրահանգումներով:

Փոխադրության մատուցման եղանակները

Ինչ վերաբերում է փոխադրության կազմակերպմանն ու անցկացմանը, ապա այս դեպքում ևս պիտի կարևորել բնագրերի ճիշտ ընտրությունը, ըստ որում պետք է հաշվի առնել, թե դրանք բառերի նրբերանգային-իմաստային առանձնահատկությունների և խոսքում կիրառելու աշխատանքի ինչպիսի հնարավորություններ են տալիս, ասենք՝ նյութերից մեկում չարի ու բարու պայքարն արտահայտվում է հոմանիշների երկու խումբ բառերով, որոնց նրբիմաստային տարբերությունը գիտակցվում է: Հունական դիցաբանությունից վերցված բնագրերը հարուստ են դարձվածքներով և թևավոր խոսքերով, որոնք այնքան անհրաժեշտ են խոսքը դիպուկ դարձնելու համար և նպաստում են մարդու զարգացվածությանը: Կարելի է ընտրել նյութեր, որոնք աշակերտին ցույց կտան մեր լեզվի ճոխությունն ու գեղեցկությունը, իսկ նրանցում գործածված բառերն ու բառակապակցությունները ինքնին գեղեցիկ շարադրանքի նյութ կլինեն, որի շնորհիվ կձևավորվի գրական ճաշակ. աշակերտները կսովորեն գեղեցիկ խոսել ու օգտվել մեր հարուստ բառագանձից:

Նախագծելիս հաշվի ենք առնում նաև փոխադրվելիք նյութի կապը տոների, տարվա եղանակների, արդի քաղաքական կացության հետ: Աշակերտի ուղղագրական, կետադրական, ոճական գիտելիքները, երևակայական ու ստեղծագործական հակումները, պատկերավոր մտածողությունը ոչ մի գրավոր աշխատանքում այնպես պարզ չեն դրսևորվում, ինչպես փոխադրության մեջ: Եվ ոչ մի գրավոր աշխատանքի ժամանակ ուսուցիչն այնքան չի աշխատում, այնքան չի սովորեցնում ու չի դաստիա-

բակում, որքան փոխադրության դասին: Հայտնի է, որ փոխադրության դաս կազմակերպելը հեշտ չէ. այստեղ համատեղ աշխատում են թե՛ ուսուցողը, թե՛ սովորողը: Փոխադրության դասին աշակերտներից առաջնահերթորեն պահանջվում է բառապաշարի անհրաժեշտ ենթաշերտի տիրապետում:

Փոխադրության դասից հետո առաջադրում ենք աշակերտներին հանրագիտարան-բառարանում դուրս գրել դուր եկած մտքերը, որոնք շարադրության կամ զրույցի թեմաներ են, օրինակ՝ «Թող ապրեմ տանջանքով, բայց ոչ ծնկաչոք», «Քանի հայոց այբուբենը կապրի, հայը չի մեռնի», «Ունեցեք հավատ մանանեխի հատիկի չափ», «Կյանքի սերը հաղթում է մահին», «Ոգի առավել է, քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ», «Ճրագ մարմնոյ ակն է: Եթե ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսավոր եղիցի» [5]:

Չպետք է մոռանալ, որ անհրաժեշտ է փոխադրվելիք նյութը կապել նաև հայոց լեզվի դասընթացի ուսումնասիրվող քերականական նյութի հետ:

Միջառարկայական կապի ապահովման համար ուշադրություն ենք դարձնում նյութերի ճանաչողական նշանակության վրա: Բոլոր նյութերը ուսանելի են, աշակերտն ընկնում է արվեստի աշխարհ, խոսում է արվեստի լեզվով. երբ փոխադրում է նյութը, ակամա սկսում է հասկանալ արվեստի գաղտնիքները: Քանդակագործությունն ու ճարտարագիտությունը դառնում են հասկանալի, երբ բացատրում և գործածում են *բարձրաքանդակ, մույթ, ժանեկազարդ խոյակներ, ոսկյա դրոշմապատկերներ, որմնաքանդակ, բնական քարեր՝ հակինթ, սուտակ, շափյուղա, մարմարիոն, խորշ, ձեղուն* («Մոռանալ Հերոստրատին») [5]:

Նկարչության «լեզվով» կարելի է խոսել «Զվաձև դիմանկարը» նյութը փոխադրելիս: Երաժշտության աշխարհը գրավիչ կդառնա «Կախարդական հնչյունների արքան», «Սուսերով պարը», «Ռեքվիեմ» և այլ նյութերը փոխադրելիս [5]:

Ավագ դպրոցում գործածվում են փոխադրության տարբեր տեսակներ, օրինակ՝ *անվերնագիր, ստեղծագործական մուտքով, ինքնուրույն հանգուցալուծմամբ, գրական դատ և այլն:* Ավագ դպրոցում հանձնարարելի փոխադրությունները կարելի է բաժանել 3 հիմնական խմբի՝ *պատմողական, նկարագրական և դատողական* [1]:

Ավագ դպրոցում փոխադրություն գրելու համար կարևոր գործոններ են սեփական կարծիքի ազատ դրսևորումը, անկաշկանդ և հմուտ շարադրումը, մտքերի ինքնուրույն ձևակերպումը :

Փոխադրության բովանդակության պարզ շարադրանքը պարտադիր չէ հանձնարարել բոլոր աշակերտներին: Նույն նյութի վերաբերյալ տարբեր առաջադրանքներ կարելի է մշակել: Փոխադրություն դաս անկացնելիս հաջողությամբ ենք կիրառում խմբային աշխատանքի ձևը՝ որպես արդեն հայտնի փորձ: Ամեն խմբի առջև դրվում է մեկ որոշակի պահանջ, ասենք՝ 1-ին խումբը տեքստը բաժանում է մասերի, դրանց համար պլան և հարցեր մշակում, 2-րդ խումբը վերարտադրում է բովանդակությունը պարզ և հաջորդական նախադասություններով, 3-րդ խումբը նոր կերպար է ներմուծում և շարունակում պատմությունը, 4-րդ խումբը դեպքերին նոր ընթացք է հաղորդում, 5-րդ խումբը տեքստը հարստացնում է երկխոսություններով, 6-րդ խումբը կարծիք կամ դատողություններ է գրում կարդացածի մասին: Ուսուցիչը տալիս է ժամանակ, հետևում աշխատանքին, չի միջամտում: Յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է կատարած խմբային աշխատանքը: Խմբերը ստեղծագործական աշխատանք են կատարում:

Բոլոր աշակերտների գործուն մասնակցությունն ապահովելու, բազմաբնույթ առաջադրանքների կատարմանն ընդգրկելու նպատակով ստեղծագործաբար ենք կիրառում նոր մեթոդները, գործադրում հնարներ՝ հիմնվելով նախորդ տարիների փորձի արդյունքների և առաջացած խնդիրների հնարավոր լուծման ուղիների հայտնաբերման վրա: Այժմ ներկայացնենք փոխադրության դասի մի օրինակ:

Դասի թեման՝ գրավոր աշխատանք – ուսուցողական փոխադրություն՝ «Սիրո օրենքը»

Դասի նպատակը՝

- ակադեմիական՝ գիտելիքներ արվեստի մասին, բառապաշարի հարստացում
- հանրային՝ աշակերտների գրավոր կապակցված խոսքի, ստեղծագործական կարողությունների և երևակայության զարգացում, ինքնուրույնության զարգացում
- արժեհամակարգային՝ գրական ճաշակի ձևավորում
- վերաբերմունքային՝ արվեստի լեզուն ընկալելու ունակություններ, մարդկային արժանապատվության գիտակցության ձևավորում

Մեթոդները՝ «Հատվածակողմ», «Եռամաս օրագիր»

Դասարանի կահավորումը՝ նկարներ, նախագծեր, ձայնագրիչ, պաստառ՝ վրան գրված Եղիշե Չարենցի խոսքերը. «Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու, Քեզ միայն քո յարն է վառել, քանի յարեր վառել ես դու…»:

Դասի ընթացքը՝ Կիրառում ենք ԽԻԿ համակարգը. դասի տևողությունը 2 դասաժամ է:

Խթանման փուլում հնչում է Սայաթ-Նովայի սիրային երգերից, ցուցադրվում է «Սայաթ-Նովա» ֆիլմից հատված:

Օգտագործում ենք «Հատվածակողմ» մեթոդը՝ «Սեր» մեկնաբառով: Երեխաներն արտահայտում են իրենց խոհերն ու պատկերացումները սիրո մասին և գուշակում են, որ փոխադրության թեման սիրո մասին է: Վերնագիրը գրում ենք գրատախտակին:

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանում ենք 4 խմբի: Թղթերի վրա գրված են Սայաթ-Նովայի բանաստեղծություններից տողեր. աշակերտները գուշակում են վերնագրերը, և ըստ բանաստեղծությունների գտնված վերնագրերի՝ ձևավորվում են խմբերը:

Օգտագործում ենք «Եռամաս օրագիր» մեթոդական հնարը [1]:

Խմբերից յուրաքանչյուրին բաժանում ենք թերթիկներ՝ 3 սյունակով. առաջին և երրորդ խմբերին լրացուցիչ բաժանում ենք բառարան-թերթիկներ, որտեղ գրված են հատվածի բարբառային բառերի բացատրությունները (տե՛ս 2-րդ աղյուսակը):

Աղյուսակ 2

Բառարան-թերթիկների ընդհանուր համադրական պատկերը

Խումբ 1	Թիֆլիսի բարբառ	Գրական արևելահայերեն	Մեկնաբանություններ
Խումբ 2	Անծանոթ գրական բառեր	Բառերի իմաստը	Կիրառություն
Խումբ 3	Թիֆլիսի բարբառ	Գրական արևելահայերեն	Մեկնաբանություններ
Խումբ 4	Հարցեր	Պատասխաններ	Նոր տեղեկություն

Հաջորդ քայլին յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչ կարդում է «օրագիրը»: Նյութը՝ «Սիրո երգը», բաժանում ենք 4 մասի: Նոր խմբեր են ձևավորվում, և յուրաքանչյուր խմբին բաժանում ենք հատվածներ: Պահանջում ենք կարդալ և պատասխանել հատվածի ներքևում տրված հարցերին:

1-ին հատված.

1. Այս հատվածի ընթերցումից ի՞նչ պարզվեց, ի՞նչ հետևություն արեցիք և ո՞ր տողերից:
2. Ուշադրությո՛ւն դարձրեք հետևյալ տողերին. «Իմացի՛ր սրտի վրա ծանրացած մեղքը քավելու համար քեզ թավադություն է շնորհել»: Ձեր կարծիքով՝ ի՞նչ միտք էր դա:

2-րդ հատված.

1. Ընտրե՛ք համապատասխան երաժշտություն այս հատվածի համար:
2. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Սայաթ-Նովան համաձայնեց գնալ պալատ:

3-րդ հատված.

1. Ձեր աչքին ի՞նչ գույնով է պատկերվում տվյալ հատվածը, կամ ի՞նչ գույնով կներկեիք այն:
2. Նկարագրե՛ք դեպքերի հաջորդական ընթացքը:

4-րդ հատված.

1. Ձեր կարծիքով ո՞րն է այս հատվածի ամենակարևոր նախադասությունը. ինչի՞ հաստատումն է դա:
2. Ինչպե՞ս եք պատկերացնում պատմության ավարտը:

Բոլոր խմբերը ներկայացնում են աշխատանքը, ընթերցում հարցերը և պատասխանում:

Կշռադատման փուլում քննարկման և ամփոփման նպատակով տալիս ենք հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է արժանապատվությունը:
2. Ինչպե՞ս եք մեկնաբանում հետևյալ նախադասությունը. «Չէ՞ որ սիրո սուրբ օրենքների գիրքը մարդու սիրտն է»:
3. Ո՞րն է այս նյութի ամենակարևոր ասելիքը:
4. Ի՞նչ կհիշեք այս նյութի հետ կապված:

Լսում ենք պատասխանները, երեխաներն ամփոփում են նոր ստացած գիտելիքները, կատարում ճիշտ ընդհանրացումներ, հակադրվում են, բանվիճում. այս ամենը նպաստում է իմացածի առավելագույն կիրառելիությանը:

Այս փուլն ավարտելուց հետո կազմում ենք փոխադրության նախագիծ՝ ըստ հատվածների 2-րդ հարցերի պատասխանների. սրանք նպատակայնորեն են բաշխված, այսինքն՝ հիշեցնում ենք նյութի բովանդակությունը:

Բոլորը գրում են փոխադրությունը՝ ավարտելով սեփական մտքերով

և եզրահանգումներով, որոնց վերաբերյալ աշակերտները քննարկման ընթացքում արդեն կարծիքներ են հայտնել: Նշված քայլերի շնորհիվ բոլոր երեխաներն աշխատում են ինքնուրույն, սովորում են գրագետ շարադրանքով վերարտադրել տեքստը, դատողություններ անել՝ անկաշկանդ արտահայտելով սեփական վերաբերմունքը:

Եզրակացություն

Կարևորելով ավագ դպրոցում սովորողների կապակցված գրավոր խոսքի զարգացման բավարար մակարդակը՝ պետք է նշել, որ շարադրության և փոխադրության՝ որպես տարիքային այս խմբի համար գրավորի շատ պահանջված տեսակների, ուսուցումը աշակերտի գիտելիքների ստուգման և խոսքի զարգացման ամենաարդյունավետ իրողությունն է:

Ոչ ավանդական մեթոդներով շարադրության և փոխադրության ուսուցումը բարձր արդյունավետություն է ապահովում, և աշակերտները բավականին դրական են ընկալում, քանի որ այսկերպ հաղթահարվում են ստեղծագործելու դժվարին գործընթացի իրականացման սպասելի վախերը:

Գրականություն

1. Ալեքսանյան Թ., Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Երևան, 2012:
2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, ԵՊՀ, Երևան, 2004:
3. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 1998:
4. «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացի ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2021:
5. Նազարյան Ռ., Ալեքսանյան Թ., Փոխադրության նյութերի ժողովածու 4-10-րդ դասարանների համար, Զանգակ-97, Երևան, 2000:
6. Հայոց լեզու և հայ գրականություն, ավագ դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, հաստատված են ՀՀ ԿԳ նախարարի 02.12.2008 թ.-ի 1078-Ա/Ք հրամանով, https://lib.armedu.am/category/41/date_created/desc:

Организация и проведение сочинения, изложения путем сочетания традиционных и современных методов

Ануш Едоян
Нарине Адамян

Резюме

Ключевые слова: *развитие связной речи, творчески-аналитические сочинения, методические приемы, «Диагональ эссе», «Литературная группа», лист «Анализ образа», повествование, описательно-оценочные изложения, «Призма», «Трехчастный дневник»*

Учитывая необходимость развития письменной речи у старшеклассников, следует отметить, что сочинения и изложения, как наиболее востребованный вид письменных работ для этой возрастной группы, являются наиболее эффективным способом проверки знаний и навыков учащихся в сфере развития письменной речи.

Нетрадиционные методы обучения обеспечивают высокую эффективность и довольно положительно воспринимаются учениками, так как они легче преодолевают трудности традиционной боязни творческого процесса.

Organization and Delivery of Essays, Transportation by a Combination of Traditional and Modern Methods

Anush Yedoyan
Narine Adamyan

Summary

Key words: *development of coherent speech, creative and analytical essays, "Diagonal essays", methodological techniques, "Literary group", a sheet of "Analysis of the image", narration, descriptive and evaluative transpositions, "Prism", "A three-part diary"*

Taking into account the need of developing written language among high school students, it should be noted that essays and presentations, as the most demanded type of written work for this age group, are the most effective ways to test students' knowledge and skills in terms of speech development.

Non-traditional teaching methods provide high efficiency and are quite positively perceived by students, as they more easily overcome traditional fears of the creative process.

Ներկայացվել է 25.09.2021 թ.
Գրախոսվել է 02.10.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.